ՀՀ առևտրատնտեսական կապեր. համավարակից առաջ և հետո

Բաղդասարյան Լ. Լ.
Տնտ. գիտ.թեկնածու, ասիստենտ, ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոն
(Երևան, Հայաստան)
baghdasaryan_lilit@bk.ru

Վճռորոշ բառեր. ԵԱՏՄ, ԵՄ, ԱՊՀ, առևտրատնտեսական կապեր, արտահանում, ներմուծում, համավարակ

Торгово-экономические связи РА до и после пандемии

Багдасарян Л. Л.
к.э.н., АГЭУ, Факултет регулирования экономики и международных экономических отношений, кафедра экономической теории (Ереван, Армения)
baghdasaryan_lilit@bk.ru


Аннотация. Пандемия, которая неожиданно и быстро распространилась по миру, безусловно, окажет негативное влияние на государства, институты, общества и социально-экономическую жизнь. В статье рассматриваются общие объемы экспорта и импорта РА, торгово-экономические отношения со странами-членами СНГ, ЕС, ЕАЭС. Фактически проанализированы показатели 2015-2019 гг. и сделаны прогнозы на 2020-2024 гг. Прогнозы сделаны при прочих равных условиях на основе статистических данных. Нами также рассмотрены негативные последствия пандемии для экономик всех стран мира, довольно сложный процесс восстановления мировой экономики и улучшения экономических показателей, а также возможные результаты, обусловленные правильными действиями аппарата государственного управления.
Ключевые слова. ЕАЭС, ЕС, торгово-экономические связи, экспорт, импорт, пандемия

Trade and Economic Relations of the Republic of Armenia before and after Pandemic

Baghdasaryan L. L.
PhD, Faculty of Regulation of Economy and International Economic Relations, Chaire of theory of economics (Yerevan, Armenia)
baghdasaryan_lilit@bk.ru


Abstract. The pandemic, which has spread unexpectedly and rapidly around the world, will certainly have a negative impact on states, institutions, societies, and socio-economic life.
The article considers the total volumes of export and import of the Republic of Armenia, trade and economic relations with the member countries of the CIS, the EU, the EAEU. In fact, the indicators of 2015-2019 have been analyzed, and forecasts have been made for 2020-2024. Forecasts have been made ceteris paribus on the basis of statistical data. We have also examined the negative consequences of the pandemic for the economies of all the countries of the world, rather complicated process of the restoration of the world economy and the improvement of economic indicators, as well as possible results conditioned by the correct actions of the state administration apparatus.
Key words. EAEU, EU, Trade and Economic Relation, export, import, Pandemic

Անսպասելի հայտնված և սրընթաց կերպով ամբողջ աշխարհում տարածված համավարակն անշուշտ իր բացասականն հետևանքներն է թողնելու պետությունների, ինստիտուցիոնալ կառույցների, հասարակության, սոցիալ-տնտեսական կյանքի վրա: Հետհամավարակային կյանքն առավել անկանխատեսելի է այն առումով, որ դեռ շատ հարցեր կան հաղթահարման ժամկետների, հետևանքների և ճգնաժամային իրավիճակից լիարժեք հետ վերադարձի հետ կապված [**1**]: Մեր կողմից կատարված ուսումնասիրություններն ընդգրկում են ՀՀ առևտրատնտեսական կապերի վրա համավարակի հնարավոր բացասական հետևանքների գնահատումը և վերջիններիս հաղթահարման հնարավոր ուղիների առաջադրումը: Եվ այսպես՝ 2019թ. ՀՀ առևտրաշրջանառության սալդոն, լինելով բացասական, կազմել է մոտ 2,8 մլրդ. ԱՄՆ դոլար: ՀՀ արտահանման և ներմուծման ծավալները ունեցել են աճի միտում, սակայն ներմուծման աճի տեմպերն ավելի բարձր են, քան արտահանմանը տեմպերը (տես գծապատկեր 1): Մի նկատառում ևս՝ բոլոր կանխատեսումներն արվել են համավարակից առաջ և այլ հավասար պայմաններում, իսկ արտաքին էֆֆեկտների բացասական հետևանքներին կանդրադառնանք հոդվածի վերջում:



Գծ. 1 ՀՀ ընդհանուր արտահանման և ներմուծման 2015-2019թթ. և 2020-2024թթ. կանխատեսվող ծավալները [2]


2019թ. ՀՀ արտահանման ծավալներում դեպի ԵԱՏՄ արտահանման բաժինը կազմել է 28,8%, ԵՄ երկրներինը՝ 22,1%, ԱՊՀ երկրներինը (ԵԱՏՄ անդամ չհանդիսացող)՝ 1,2%, իսկ այլ երկրներինը՝ 47,9%: Տոկոսային հետևյալ հարաբերակցություն է արձանագրվել ՀՀ ներմուծման ծավալներում՝ ԵԱՏՄ-ից ներմուծումը կազմում է՝ 27,8%, ԵՄ՝ 20,9%, ԱՊՀ երկրները (ԵԱՏՄ անդամ չհանդիսացող)՝ 4% և այլ երկրները՝ 47,3%: Անդրադառնանք վերջիններիս առանձին-առանձին: ***ՀՀ-ից դեպի ԵԱՏՄ*** արտահանման ծավալները 2015-2019թթ. անընդհատ աճ են գրանցել, և ինչպես արտացոլված է գծապատկեր 2-ում աճը ամենայն հավանականությամբ կշարունակվեր նաև 2020-2024թթ.: Նույնը կարող ենք ասել նաև ներմուծման ծավալների համար, դրանք նույնպես կաճեին հաջորդ տարիներին: Սակայն կանխատեսումները կանխատեսում, իսկ իրական փաստերը՝ փաստ:



Գծ. 2 ՀՀ արտահանման և ներմուծման ծավալները դեպի ԵԱՏՄ 2015-2019թթ. և 2020-2024թթ. Կանխատեսումներ
[2]

Ներմուծման և արտահանման ծավալները աճում են գրեթե համամասնորեն, քանի որ 2019թ. արտահանման և ներմուծման սալդոն բացարձակ արժեքով կազմել է 770մլն. ԱՄՆ դոլար, իսկ 2024թ. ըստ կանխատեսումների այն կկազմի մոտ 750 մլն. ԱՄՆ դոլար:


Դեպի ԵՄ երկրներ արտահանման և այդ երկրներից ներմուծման ծավալներում նույնպես հիմնականում աճ է գրանցվել (բացառությամբ 2019թ.), և ըստ կանխատեսման կշարունակվեին աճել հաջորդ տարիներին ևս:



Գծ. 3 ՀՀ արտահանման և ներմուծման ծավալները ԵՄ երկրներ 2015-2019թթ. և 2020-2024թթ. Կանխատեսումներ [2]


2019թ ԵՄ և՛ ներմուծման և՛ արտահանման ծավալները. նվազել են ինչի արդյունքում ՀՀ արտահանման ընդհանուր ծավալում 2018թ. գրանցած ԵՄ տոկոսային կշիռը 28,3%-ից 2019թ. նվազել է մինչև 22,1%, իսկ ներմուծումը նվազել է 2,36 տոկոսային կետով, սակայն սա էական ազդեցություն չի ունեցել տրենդի ուղղության վրա: Նկատենք, որ ներմուծման ծավալների աճի տեմպը ավելի բարձր է քան արտահանմանը, ինչը հանգեցնում է ավելի մեծ բացասական սալդոյի առաջացման, ինչն էլ իր ազդեցությունն է թողնում ընդհանուր հաշվեկշռի վրա:

Անդրադառնալով ԵԱՏՄ անդամ չհանդիսացող ԱՊՀ մյուս երկրներին՝ (Ուկրաինա, Տաջիկստան, Մոլդովա, Թուրքմենստան, Ուզբեկստան), նշենք, որ ՀՀ առևտրաշրջանառության մեջ նրանց բաժինը շատ փոքր է: Արտահանման մեջ այն մոտ 1% է, իսկ ներմուծման մեջ այն կազմում է 2,9%, որից 2,6%-ը բաժին է ընկնում միայն Ուկրաինային: Այստեղ ևս ներմուծման ծավալները գերազանցում են, արտահման ծավալները, ինչը դարձյալ բացասաբար է անդրադառնում ՀՀ արտահանման և ներմուծման սալդոյի վրա:




Գծ. 4 ՀՀ արտահանման և ներմուծման ծավալները ԱՊՀ երկրներ 2015-2019թթ.և 2020-2024թթ. Կանխատեսումներ [2]

ՀՀ արտահանման և ներմուծման ծավալներում, ինչպես մինչև ԵԱՏՄ անդամակցումը, այնպես էլ ԵԱՏՄ անդամակցելուց հետո գերակշռում է այլ երկրների մասնաբաժինը: Այս երկրների հետ արտաքին առևտուրը ևս չի տուժել՝ ԵԱՏՄ անդամակցության հինգ տարիների ընթացքում թե՛ արտահանման և թե՛ ներմուծման ծավալները անընդհատ աճել են, ինչն էլ հիմք է հանդիսանում 2020-2024թթ.-ին ևս այս ծավալների գծով աճի կանխատեսման: Ընդ որում այս դեպքում ևս ներմուծման աճի տեմպը գերազանցում է արտահանման աճի տեմպին:




Գծ.5 ՀՀ արտահանման և ներմուծման 2015-2019թթ.և 2020-2024թթ. կանխատեսվող ծավալները այլ երկրներ [**2**]

Այս երկրների շարքում առանձանցնենք ՀՀ հարևան պետություններին և մի քանի առավել կարևոր նշանակություն ունեցող երկրների: ՀՀ-ի ԵԱՏՄ անդամակցելուց հետո բարձր տեմպով աճել են Իրանից և Թուրքիայից ներմուծման ծավալները: Իրանից ներմուծման ծավալների աճին կնպաստի նաև ԵԱՏՄ-ի և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ազատ տնտեսական գոտու ստեղծման մասին համաձայնագիրը, որը կնքվել է 2018թ. մայիսի 17-ին:



Գծ.6 ՀՀ ներմուծման 2015-2019թթ. և 2020-2024թթ. կանխատեսվող ծավալները հարևան երկրներ [**2**]




Գծ.7 ՀՀ արտահանման 2015-2019թթ. և 2020-2024թթ. կանխատեսվող ծավալները հարևան երկրներ [**2**]

Համաձայնագրով նախատեսվում է 3 տարվա ընթացքում գալ համաձայնության համաձայնագրի ավելի լայնաֆորմատ տարբերակի համար, ինչի արդյունքում այն կընդգրկի համարյա ամբողջ ապրանքային անվանացանկը, քանի որ ժամանակավոր համաձայնագիրը իր մեջ ներառում է ապրանքների մոտ 50%-ը, որոնց ներմուծման մաքսատուրքերը պետք է նվազեցվեն կամ էլ հավասարվեն 0-ի փաստաթղթի ստորագրումից հետո: Ըստ կանխատեսումային տվյալների, համաձայնագրի իրացումից հետո ԵԱՏՄ

անդամ երկրների և Իրանի միջև առևտրաշրջանառությունը պետք է աճի մոտ 150%-ով [**3**]: Այս համաձայնագիրը ձեռնտու է հատկապես Հայաստանի համար, քանի որ Հայաստանը հանդիսանում է ԵԱՏՄ անդամ միակ երկիրը, որը ունի սահման Իրանի հետ: Եվ գծապատկերից էլ երևում է, որ Իրանից ՀՀ ներմուծման ծավալները նույնպես կաճեն այդ տեմպով, և ամենայն հավանականությամբ 2023թ. մոտ 1,5 անգամ կգերազանցեն 2019թ. գրանցած ցուցանիշները:


Ինչ վերաբերվում է Վրաստանին, ապա վերջինիս ներմուծման ծավալները նախորդ հինգ տարիներին գրեթե չեն փոփոխվել, ինչի արդյունքում դժվար է հասկանալ հաջորդ տարիների համար դրանք նվազման միտում կցուցաբերեն, թե՝ աճի: Սակայն այլ պատկեր է նկատվում դեպի հարևան երիկրներ արտահանման ցուցանիշները դիտարկելիս: Դեպի Թուրքիա արտահանումը շատ չնչին է, հետևաբար ՀՀ ընդհանուր արտահանման մեջ այն էական նշնակություն չի ունենա, դեպի Իրան արտահանման կանխատեսվող աճի տեմպը շատ ցածր է, իսկ Վրաստատանի դեպքում այն ինչպես մեծ ծավալներով նվազել է 2015-2019թթ, այնպես կշարունակի նվազել, եթե որևէ էական փոփոխություն տեղի չունենա:




Գծ.8 ՀՀ ներմուծման 2015-2019թթ.և 2020-2024թթ. կանխատեսվող ծավալները այլ երկրների հիմնական գործընկերներից [**2**]

Ինչ վերաբերվում է Շվեցարիայի արտահանմանը՝ այն մինչև 2019թ., չնայած տատանողական, սակայն աճ է գրանցել բավականին բարձր աճի տեմպով, ինչը կշարունակվի նաև հաջորդ տարիներին: Պետք նշել նաև, որ դեպի Շվեցարիա արտահանման ծավալները մի քանի անգամ գերազանցում է ներմուծման ծավալներին, բացի այդ ՀՀ արտահանման ծավալներում նրա բաժինը բավականին մեծ է, որի արդյունքում այն փոքրացնում է ՀՀ բացասական սալդոն: Մնացած երկրների հաշվով մեծ փոփոխություններ չեն նկատվում:

Ավելի պարզ տեսնելու համար ՀՀ արտահանման և ներմուծման հետագա պատկերը ԵԱՏՄ, ԵՄ և այլ երկրների ներմուծումը և արտահանումը՝ դիտարկենք ԵԱՏՄ, ԵՄ և այլ երկրների արտահնումը և ներմուծումը միասին:



Գծ.9 ՀՀ արտահանման 2015-2019թթ. և 2020-2024թթ. կանխատեսվող ծավալները ԵԱՏՆ, ԵՄ և այլ երկրներ [**2**]



Գծ.10 ՀՀ ներմուծման 2015-2019թթ. և 2020-2024թթ. կանխատեսվող ծավալները ԵԱՏՄ, ԵՄ և այլ երկրներ [**2**]

ՀՀ արտահանման կառուցվածքում առաջին տեղում է ԵԱՏՄ-ն՝ ի դեմս Ռուսաստանի, իսկ երկրորդ տեղում է գտնվելու ԵՄ-ն: Հատկանշական է, որ ԱՄԷ-ի տեսակարար կշիռը նույնպես բարձր է: Այս ամենը հաշվի առնելով, ինչպես նաև հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ-ն ունի արտահանման արտոնություններ ԵՄ և ԵԱՏՄ հետ համագործակցությունում, ապա ՀՀ-ն պետք է իրականացի այնպիսի քաղաքականություն, որպեսզի խրախուսի արտահանումը դեպի այլ երկրներ, մասնավորապես ԱՄԷ, ԱՄՆ և Չինաստան, քանի որ վերջին տարիների միտումները ցույց են տալիս, որ կան բոլոր նախադրյալները ՀՀ արտահանման աճ ապահովել հենց այդ ուղղություններով:

Ներմուծման ոլորտում դարձյալ ՀՀ հիմնական առևտրատնտեսական գործընկերոջ դիրքը բաժին կհասնի ԵԱՏՄ-ին՝ 29.6%: ԵՄ-ին բաժին կընկնի ՀՀ ներմուծման մոտ 22.53%-ը, 2.7%-ը՝ Ուկրաինային, 2.67%-ը՝ Վրաստանին, 4.22%-ը՝ ԱՄՆ-ին, 15.5%-ը ՝ Չինաստանին, 2.8%-ը՝ ԱՄԷ-ին: Այսպիսով, կշարունակվի արտահանման և ներմուծման ծավալների աճը ԵԱՏՄ և ԵՄ երկրներից, ինչպես նաև նախադրյալներ և հնարավորություններ կան հատկապես Իրանի, Չինաստանի և ԱՄՆ-ի հետ հարաբերություններում, այդ պատճառով էլ ՀՀ-ն պետք է շահագրգռված լինի այս երկրների հետ ազատ առևտրի համաձայնագրերի և հայրենական ապրանքների արտահանման համար այլ նպաստավոր, արտոնյալ պայմանների ստեղծման հարցում:

21-րդ դարի համավարակը դեռ երկար տարիներ իր բացասական հետևանքները կթողնի աշխարհի բոլոր երկրների տնտեսությունների վրա: Մեր կանխատեսումներում կատարված հետևություններն էլ գուցե որոշ տոկոսային փոփոխությունների ենթարկվեն: Դժվար է կանխատեսել, թե իրականում, վերջնականապես, երբ կվերականգնվի համաշխարհային տնտեսությունը: Այդուհանդերձ, կարծում ենք, պետական կառավարման ապարատի ճշգրիտ գործողություններով հնարավոր կլինի կարճաժամկետում վերականգնել նախկին ցուցանիշները:

Օգտագործված գրականության ցանկ

1. World Health Organization. (2020). Situation Report 13, Retrieved 25 June, 2020, https://www.who.int/docs/default-source/coronaviruse/situation-reports/20200202-sitrep-13-ncov-v3.pdf
2. Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2015-2019թթ https://www.armstat.am
3. http://ru.valdaiclub.com/a/highlights/eaes-bolshaya-evraziya/
4. «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» պայմանագրի հավելված 4
5. «Միջազգային տնտեսագիտություն», Ուսումնական ձեռնարկ, հեղ. Դ. Ռ. Գալոյան, Զ.Ա. Թադևոսյան, Երևան 2018թ.
6. «ՀՀ անդամակցությունը ԵԱՏՄ-ին և դրա ազդեցությունը արտաքին առևտրի վրա», հեղ. Ջանջոյան Ա Երևան 2016 թ.
7. ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, 2015- 2019թթ.
8. ՏԵՂԵԿԱՆՔ 2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-դեկտեմբեր)
9. «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն», 2019թ.
10. «Ռուսաստանի Դաշնության արտահանման ծավալները ԵԱՏՄ անդամ երկրներ» 2017-2018թթ.

Сдана/Հանձնվել է՝ 04.11.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 18.11.2020
Принята/Ընդունվել է՝ 25.11.2020